

Մետրոյի՝ Գլուխ VI-ի քաղաքականությունը

Լոս Անջելեսի շրջանի Քաղաքային տրանսպորտի վարչությունը և Հասարակական ուղևորափոխադրման ծառայությունների կորպորացիան (միասին այսուհետև՝ "Մետրո") հանձն են առել երաշխավորել, որ, ինչպես և ենթադրում է 1964թ. Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Գլուխ VI-ը՝ իր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, չի լինի որևիցե մեկը, որ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության պատճառով զրկվի իր ծառայություններից կամ դրանց հետ կապված արտոնություններից օգտվելու հնարավորությունից:

Ոչ մի մարդ կամ մարդկանց խումբ չի կարող խտրականության ենթարկվել ուղեվարձերի, երթուղիների, չվացուցակների կազմման կամ ուղևորափոխադրման ծառայությունների որակի հարցում՝ իր ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության պատճառով: Ծառայությունների հաճախությունը, երթուղիներին կցված Մետրոյի փոխադրամիջոցների տարիքը և որակը, Լոս Անջելեսի շրջանը սպասարկող Մետրոյի կայարանները և երթուղիների տարածական ծածկույթը չեն կարող որոշվել՝ հիմք ընդունելով ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը կամ ազգային ծագումը:

Անխտրականությանը վերաբերող Մետրոյի պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար գրեք Մետրոյի Աշխատանքի տեղավորման իրավահավասարության ծրագրի ղեկավարին՝

METRO
EEO Program Manager
One Gateway Plaza
Los Angeles CA 90012

Ցանկացած ոք, ով կարծում է, որ ինքն անհատապես կամ որպես մարդկանց որևիցե կոնկրետ դասի ներկայացուցիչ ենթարկվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականության, կարող է Մետրոյին ներկայացնել Գլուխ VI-ի բողոք:

Բողոքը պետք է ներկայացվի խտրականության դրսևորման պահից հետո՝ 180 օրվա ընթացքում: Գրավոր բողոքները կարող են ներկայացվել Մետրոյի Աշխատանքի տեղավորման իրավահավասարության ծրագրի ղեկավարին (հասցե՝ Metro, One Gateway Plaza, EEO Program Manager, 99-13-4, Los Angeles CA 90012), կամ կարելի է առցանց բողոքի ձև լրացնել (տե՛ս ստորև)՝ ուղարկելով այն Մետրոյի՝ Հաճախորդների հետ կապերի բաժին:

Բացի Գլուխ VI-ի բողոքի Մետրոյի գործընթացից, կարելի է նաև բողոք ներկայացնել Փոխադրումների ֆեդերալ ադմինիստրացիայի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (հասցե՝ Federal Transit Administration, Office of Civil Rights, Region IX, 201 Mission Street, Suite 1650 San Francisco California 94105-1839):

Գլուխ VI-ի բողոքի ներկայացման կարգը

Եթե Դուք կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրականություն են ցուցաբերել, կարող եք տվյալ խտրական վերաբերմունքի պահից հետո՝ հարյուր ութսուն (180) օրվա ընթացքում Ձեր ստորագրությամբ գրավոր բողոք ներկայացնել: Բողոքը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- Ձեր անունը, հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե և այլն)
- Ինչպես, որտեղ և երբ եք Դուք խտրականության ենթարկվել և ինչու եք կարծում, որ դա խտրականության դրսևորում է: Նշեք տեղը և ականատեսների անուններն ու կոնտակտային տվյալները:

Բողոքը կարող է գրավոր ձևով ներկայացվել Մետրոյի՝ Հաճախորդների հետ կապերի բաժին՝

Customer Relations

Los Angeles County Metropolitan Transportation Authority
1 Gateway Plaza
Los Angeles, CA 90012

Տպվող ձև՝ Տե՛ս ստորև

Էլ. փոստ՝ Uteghn@lata.net

Հեռախոս՝ 1.800.COMMUTE (անվճար)

Լսողական արատներով մարդկանց համար՝ 1.800.252.9040 (TDD)

Բողոքի ներկայացման օժանդակություն. Եթե բողոքատուն ի վիճակի չէ ինքնուրույն բողոք գրել, ապա Մետրոյի՝ Հաճախորդների հետ կապերի բաժինը այդ հարցում օգնություն կցուցաբերի:

Բողոքատուները կարող են նաև Գլուխ VI-ի բողոք ներկայացնել արտաքին գերատեսչությունների, օրինակ՝ Փոխադրումների ֆեդերալ ադմինիստրացիան (FTA), այլ ֆեդերալ կամ նահանգային մարմինների կամ ֆեդերալ կամ նահանգային դատարանի: Այնուամենայնիվ, եթե միևնույն բողոքը զուգահեռաբար ներկայացվում է և՛ Մետրոյին, և՛ որևիցե այլ արտաքին գերատեսչության, ապա արտաքին բողոքը Մետրոյին ներկայացված բողոքի նկատմամբ ունի գերակայություն, և այսպիսի դեպքերում մետրոյին ներկայացված բողոքի ընթացքը դադարեցվում է՝ սպասելով արտաքին գերատեսչության եզրակացություններին:

Ի՞նչ է կատարվում իմ կողմից Մետրո ներկայացված բողոքի հետ

Մետրոյի կողմից առաջարկվող ծառայությունների և արտոնությունների հարցում ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության պատճառով խտրականության մեղադրանք ներկայացնող բոլոր բողոքները գրանցվում են Հաճախորդների կողմից ներկայացված դիտողությունների համակարգչային տվյալների բազայում և Մետրոյի՝ Հաճախորդների հետ կապերի բաժնի կողմից դրանց անմիջապես կցվում է բողոքի հերթական համար:

Մետրոյի՝ Հաճախորդների հետ կապերի բաժինը բողոքը վերահասցեագրում է և բողոքատուներին, այդ թվում հաշմանդամներին և անգլերեն լեզվով հաղորդակցվելու

հարցում դժվարություններ ունեցող անձանց, ցուցաբերում է համապատասխան օժանդակություն:

Այն դեպքերում, երբ բողոքի գնահատման կամ ուսումնասիրության համար լրացուցիչ տեղեկությունների կարիք է առաջանում, Մետրոն 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով դիմում է բողոքատուին: Եթե կոնկրետ ժամկետի ընթացքում բողոքատուն անհրաժեշտ տեղեկությունները չի կարողանում տրամադրել, ապա դա կարող է բողոքի վարչարարական փակման պատճառ հանդիսանալ:

Մետրոն բողոքը ուսումնասիրում է և պատրաստում գրավոր պատասխանի նախագիծ, որը ենթակա է Մետրոյի կողմից վերանայման: Նման դեպքերում Մետրոն կարող է վարչարարական ճանապարհով բողոքը փակված համարել:

Գլուխ VI-ի պաշտոնական բողոքները Մետրոյի կողմից ուսումնասիրման առարկա են դառնում դրանց ստացումից հետո՝ տաս (10) աշխատանքային օրվա ընթացքում: Հիմնվելով ստացված ամբողջ տեղեկատվության վրա՝ Մետրոն պատրաստում է գրավոր պատասխանի նախագիծ, որը ենթակա է վերանայման Մետրոյի՝ Բազմազանության և տնտեսական հնարավորությունների գծով փոխտնօրենի (DEO) կողմից:

Փոխտնօրենը որոշում է կայացնում կա՛ն նախագիրը գրելուց հետո բողոքը վարչարարորեն փակելու, կա՛ն գրավոր պատասխան ուղարկելու: Եթե կա վերջնական գրավոր պատասխանի անհրաժեշտություն, ապա Մետրոն պատասխանը ուղարկում է բողոքատուին՝ տեղեկացնելով այն մասին, որ նա իրավունք ունի ներկայացնել արտաքին բողոք:

Բողոքատուն նաև տեղեկացվում է պատասխանը սահմանված կարգով ֆեդերալ և նահանգային մարմիններում բողոքարկելու իր իրավունքի մասին: Մետրոն հնարավորության սահմաններում կաշխատի Գլուխ VI-ի բողոքներին պատասխանել դրանց ստացումից հետո՝ վաթսուն (60) աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ նախկինում նշված այն դեպքերի, երբ բողոքը միաժամանակ ներկայացվել է և՛ Մետրոյին, և՛ որևէ արտաքին գերատեսչության:

Ինչպե՞ս են արդյունքի մասին տեղեկանում

Մետրոն վերջնական գրավոր պատասխան է ուղարկում է բողոքատուին՝ տեղեկացնելով այն մասին, որ նա իրավունք ունի ներկայացնել արտաքին բողոք: Մետրոն հնարավորության սահմաններում կաշխատի Գլուխ VI-ի բողոքներին պատասխանել դրանց ստացումից հետո՝ վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում:

Բացի բողոքի ներկայացման Մետրոյի գործընթացից՝ կարելի է նաև Գլուխ VI-ի բողոք ներկայացնել ԱՄՆ Տրանսպորտի նախարարության Փոխադրումների ֆեդերալ ադմինիստրացիայի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝

U.S. Department of Transportation
Federal Transit Administration
Office of Civil Rights, Region IX

201 Mission Street, Suite 1650
San Francisco, California 94105-1839.

Ո՞վ իրավունք ունի բողոք ներկայացնել

Ցանկացած ոք, ով կարծում է, որ ինքն անհատապես կամ որպես մարդկանց որևիցե կոնկրետ դասի ներկայացուցիչ ենթարկվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականության, կարող է Մետրոյին ներկայացնել Գլուխ VI-ի բողոք:

Բողոքը պետք է ներկայացվի խտրականության դրսևորման պահից հետո՝ 180 օրվա ընթացքում: Գրավոր բողոքները կարող են ներկայացվել Քաղաքային տրանսպորտի վարչություն՝

Metropolitan Transportation Authority

One Gateway Plaza
Los Angeles, CA, 90012

կամ կարելի է բողոքի ներկայացման համար օգտագործել ստորև բերված ձևը:

Կարելի է նաև Գլուխ VI-ի բողոք ներկայացնել ԱՄՆ Տրանսպորտի նախարարության Փոխադրումների ֆեդերալ ադմինիստրացիայի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝

U.S. Department of Transportation

Federal Transit Administration
Office of Civil Rights, Region IX
201 Mission Street, Suite 1650
San Francisco, California 94105-1839.

Ի՞նչ է Գլուխ VI-ը

1964թ. Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Գլուխ VI-ը արգելում է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը այն ծրագրերում և միջոցառումներում, որոնք ստանում են պետական ֆինանսավորում:

Լուս Անջելեսի շրջանի Քաղաքային տրանսպորտի վարչությունը (Մետրո) հանձն է առել երաշխավորել, որ, ինչպես և ենթադրում է 1964թ. Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Գլուխ VI-ը, չի լինի որևիցե մեկը, որ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի կամ հաշմանդամության պատճառով զրկվի փոխադրման ծառայությունների արտոնություններից օգտվելու հնարավորությունից: Եթե կարծում եք, որ համաձայն Գլուխ VI-ի Դուք խտրականության եք ենթարկվել, ապա Դուք կարող եք բողոք ներկայացնել:

Նահանգային դատարան Տեղական մարմին

10. Խնդրում եմք տեղեկություն հաղորդել բողոքի ներկայացման մարմնի/դատարանի կոնտակտային անձի մասին:

Անունը՝
Հասցեն՝
Քաղաքը՝

Նահանգը՝

Փոստային կոդը՝

Չեռախոսահամարը՝

11. Խնդրում եմք ստորև ստորագրել: Դուք կարող եք կից ներկայացնել ցանկացած գրավոր նյութեր կամ այլ տեղեկություններ, որոնք ըստ Ձեզ առնչություն ունեն Ձեր բողոքի հետ:

Բողոքատուի ստորագրությունը

Ամսաթիվ